

Հովիկ Ավանեսով  
Մեսրոպ Մաշտոց Համալսարանի  
Կովկասագիտական կենտրոնի գիտաշխատող  
Արցախ

**Անտառափա:** Արցախյան ազգային ազատագրական պատերազմը հայ ժողովրդի նորագույն պատմության փառավոր էջերից է: Այդ համազգային պայքարի շնորհիվ պատմական հայրենիքի մի հատվածի վրա վերականգնվեց Հայոց պետականությունը: Դարակազմիկ այս իրադարձության տարեգրության ստեղծման գործում իր ներդրումն ունի «Կաճառ» գիտական կենտրոնը, որի տարեգրքերը, գրադարանային հարուստ ֆոնդն ու արժեքավոր արխիվային նյութերը խնդրո առարկա թեման համակողմանի ուսումնասիրելու համար կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն:

**Բանալի բառեր՝** արցախյան ազատամարտ, Ադրբեջանի ռազմական ագրեսիա, դարակազմիկ իրադարձություն, Հայաստանի նորագույն պատմություն, «Կաճառ» գիտական կենտրոն, տարեգրություն, ներդրում, համազգային պայքար, ռազմական ներխուժում:

«Կաճառ» գիտական կենտրոնը հիմնադրվել է **2006թ. փետրվարի 20-ին**<sup>1</sup>: Հիմնադրման օրվանից սկսած բազմաթիվ ծրագրեր է իրականացրել նպաստելով արցախագիտության ձևավորմանն ու զարգացմանը: Կենտրոնն ունի հարուստ գիտական գրադարան ու արխիվ ինչպես նաև հրատարակում է համանուն տարեգիրքը<sup>2</sup> (սկզբնական շրջանում եղել է ամենամսյա տեղեկագիր)<sup>3</sup> [5, էջ 113-114, 117-118], որում պարբերաբար հանգամանալից կերպով հրատարակվում են ինչպես արցախագիտության, այնպես էլ գիտական կենտրոնի գործունեությանն առնչվող տեղեկություններ:

Ադրբեջանի ռազմական ագրեսիային դիմագրավելու արդյունքում սկսվեց Արցախյան ազատագրական պատերազմը (**1988-1994թթ.**)<sup>4</sup>, որը **1988-ից մինչև 1991թ-ի ապրիլի 30-ն**<sup>5</sup> ընկած ժամանակահատվածում կրել է հիմնականում տեղային բնույթ: Հետագայում Ադրբեջանը ձեռնարկեց կազմակերպված ու բացահայտ ռազմական ներխուժում, որն ընթանում էր տարածքների զավթումով

\* Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՄ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ № SCS 16.10-007 գիտական թեմայի շրջանակներում:

<sup>1</sup> Գիտական կենտրոնի հիմնադրման նպատակներին, ինչպես նաև կանոնադրությանը առավել մանրամասն կարող էք ծանոթանալ «Կաճառ», «Կաճառ» գիտական կենտրոնի ամենամսյա տեղեկագիր, մարտ, թիվ 1 (1) 2006, էջ 1-2, 4-5:

<sup>2</sup> «Կաճառ» տարեգիրքը հանդիսանում է 2006թ. լույս տեսած համանուն տեղեկագրի իրավահաջորդը:

<sup>3</sup> Հիմնադրվել է «Կաճառ» գիտական կենտրոնի ՀԿ վարչության 2006թ. մարտի 9-ի միաձայն որոշմամբ:

<sup>4</sup> Մասնագիտական գրականության մեջ հանդիպում է նաև Ղարաբաղյան ազատագրական պատերազմ (ՂԱՊ), Արցախյան պատերազմ կամ ազատամարտ, Հայոց հայրենական պատերազմ, Արցախյան ազգային ազատագրական պայքար կամ պատերազմ, Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտություն և այլ եզրույթներով:

<sup>5</sup> Այս ժամանակաշրջանում ադրբեջանական ՄՀԼԶ-ն խորհրդային զորքերի օժանդակությամբ իրականացրին «Օղակ» ռազմագործողությունը: Մարտական ուղղաթիռների, հրասայլերի և գրահամեքենաների ուղեկցությամբ «անձնագրային ռեժիմի ստուգման» ու «հայ գրոհայիններին զինաթափելու» պատրվակով ներխուժեցին Գետաշենի ենթաշրջանի և Շահումյանի գյուղերը: Հատկապես թեժ մարտեր բորբոքվեցին Խանլարի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի տարածքում: Սակայն ուժերը անհավասար էին: Վերոնշյալ բնակավայրերը, ինչպես նաև 24 այլ հայկական գյուղերը բռնի հայաթափելուց հետո, Արցախում ու Հայաստանի սահմանամերձ մյուս բնակավայրերում իրավիճակը կտրուկ բարդացավ:(տես Мелик-Шахназаров А, Нагорный Карабах: факты против лжи, М., 2009, стр. 577-590, Ավանեսով Հ., ԼՂԻՄ գոյության վերջին տարիներին հայ ազգաբնակչության զինված ինքնապաշտպանության կազմակերպման մասին, «Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2016, էջ 59, Սողոմոնյան Ն., 1991 «Կոլցո» մարդորսություն, առաջին մաս, Ստեփ., 1994, 160 էջ. տես նաև նույնի՝ 1991 «Կոլցո» թեժ կետեր երկրորդ մաս, Ստեփ., 1995, 152 էջ, Բարսեղյան Ի., Թաթուկ Կրպեյանը և «Օղակ» գործողությունը «Լրաբեր Հասարակական գիտությունների», 2011, N 3, էջ 41-54, տես նաև նույնի՝ «Օղակ» ռազմական գործողության պետական-ահաբեկչական բնույթը, «Լրաբեր Հասարակական գիտությունների», 2013, N 3, էջ 83-92:

ու հայ բնակչության բռնի տեղահանումներով, որին դիմակայելու ու հայրենի երկրամասը պաշտպանելու նպատակով սկիզբ առավ Արցախյան ազգային ազատագրական պայքարը, վերջինս հիրավի, ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի նորագույն պատմության համար: Շնորհիվ համազգային պայքարի մեր հայրենիքի մի հատվածում վերականգնվեց հայկական պետականությունը [1, էջ 41]:

Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր դարակազմիկ իրադարձություն ունենում է իր վերաիմաստավորման ու վերարժևորման պահանջը: Այդ ճանապարհին ստեղծվում են բազմաթիվ աշխատություններ՝ հուշագրությունների, վկայությունների, ակնարկների, ուղեգրությունների, ժամանակագրությունների, վավերագրական պատումների, փաստաթղթերի ժողովածուների, փաստագրությունների տեսքով [4], որոնք ընդհանրացնելու և գիտական ուսումնասիրության նյութ դարձնելու անհրաժեշտություն է առաջանում: Ակնհայտ է, որ միայն վկայություններով, հուշագրություններով հնարավոր չէ լիարժեք գիտական հետազոտություն կատարել: Դրա համար պահանջվում են նաև համապատասխան արխիվային, փաստավավերագրական նյութեր, տվյալ ժամանակի պարբերական մամուլի հրատարակումների ընդհանրացում, տարբեր հիմնահարցերի շուրջ մասնակից ու ականատես գործիչների պարզաբանումներ և քննարկումներ...

Արցախյան շարժումը և նրա ռազմական փուլը, հիրավի, դարակազմիկ իրադարձություններ էին Հայաստանի նորագույն պատմության համար: Սկզբնական շրջանում հայկական պետականության վերականգնման համար պայքարում, ապա Ադրբեջանի նախահարձակ գործողությունները կասեցնելու նպատակով Հայոց հայրենական պատերազմի պայմաններում փաստավավերագրական նյութերի հավաքագրումը երկրորդ պլան էր մղված և հիմնականում առանձին նախաձեռնությունների մակարդակով էր իրականացվում: Հրադադարի հաստատումից հետո քայլեր ձեռնարկվեցին արցախյան ազատամարտի տարեգրության հիմքերը ստեղծելու, արխիվային նյութերի հավաքագրման ու համակարգման ուղղությամբ: Այս տեսակետից դրվատելի է «Կաճառ» գիտական կենտրոնի գործունեությունը, որի կարևոր ուղղություններից մեկը Արցախի նորագույն պատմության աղբյուրագիտական հենքի ստեղծումն ու հարստացումն է: Մասնավորապես հավաքագրվել, դասակարգվել, գիտական մշակման են ենթարկվել վավերագրեր, պաշտոնական փաստաթղթեր, տարաբնույթ հրատարակություններ, լուսանկարներ, տեսաֆիլմեր, ձեռագրեր և Արցախի նորագույն պատմությանը վերաբերող այլ նյութեր [2, էջ 461-462], որոնք պարբերաբար հրատարակվում են համանուն տարեգրքում:

Տարեգրքի 3-րդ հատորի հրատարակումներից մեկում գիտական կենտրոնի կողմից կատարված աշխատանքները ներկայացնող հոդվածագիրը նշում է, որ պատմական սկզբնաղբյուրների (արխիվային փաստաթղթերի կամ վավերագրերի) հրատարակման, դրանք գիտական շրջանառության մեջ դնելու ճանապարհով նաև անհրաժեշտ պատմական գիտելիքներ են տարածվել մեր ազգաբնակչության, հատկապես՝ երիտասարդության շրջանում:

Նշվում է նաև, որ առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է եղել ազգային ազատագրական պայքարի նորագույն փուլի տարեգրության հիմքերը ստեղծելու, Արցախյան պատերազմի, Պաշտպանության բանակի կազմավորման և մարտական ուղու պատմությունը լիարժեքորեն վերստեղծելու, համակողմանի ու գիտականորեն ուսումնասիրելու կարևոր գործը: Ինչպես պարզվում է նշված հոդվածից, Պաշտպանության բանակի կազմավորումը, նրա հաղթական մարտերը, և ընդհանրապես, մեր հայրենական պատերազմի մյուս կողմերը իրենց դարակազմիկ նշանակությամբ արժևորելու նպատակով ստեղծվել է հատուկ այդ հարցերով զբաղվող թեմատիկ (պրոբլեմատիկ) խումբ, որի առաջ դրված են հետևյալ խնդիրները [3, էջ 14]:

**ա)** Հավաքել, կենտրոնացնել ու համակարգել առանձին անհատների մոտ պահվող նյութերը (փաստաթղթեր, ձեռագրեր, հուշագրություններ, հրամանագրեր, մարտական զեկույցներ, լրագրային կտրածոներ, քարտեզներ, և այլն), դրանք գիտականորեն մշակել ու դասակարգել ըստ բովանդակության:

**բ)** Գրի առնել կամ ձայնագրել դեպքերի մասնակիցների, հերոսների, հրամանատարների հուշերը և վկայությունները, դրանք վերածել փաստաթղթերի՝ վավերացնելով առնվազն հինգ մասնակիցների կամ ականատեսների ստորագրություններով կամ էլ նոտարական կնիքով: Այդ փաստաթղթերը դնել գործերի մեջ՝ մշտապես փորձաքննության ենթարկելով, շարադրված փաստերը համադրելով այլ վկայությունների հետ և մշտապես թարմացնելով կամ ճշգրտելով:

զ) Պահպանված սակավաթիվ վավերագրերը, աշխատանքային տետրերը, փաստաթղթերը մանրագնին ուսումնասիրել և ժամանակի ընթացքում պատրաստել հրատարակության՝ որպես ապագա ուսումնասիրությունների համար աղբյուրագիտական հիմք:

դ) Անհրաժեշտ հիմքերի ստեղծումից հետո ձեռնարկել «Կաճառ» տարեգրքում ռազմապատմական բնույթի նյութերի, Արցախյան պատերազմի, ՊՖ-ի կազմավորման ու մարտական ուղու պատմության հարցերը լուսաբանող հոդվածների, ինչպես նաև զանազան փաստաթղթերի, վավերագրերի, գրախոսությունների, տեղեկույթների, ռազմագիտական ու պատմական այլ նյութերի հրատարակումը:

Այդ առումով «Կաճառ» գիտական կենտրոնի կողմից որոշակի քայլեր են ձեռնարկվել, որոնց արդյունքում նշված տարեգրքում հրատարակվել են մի շարք հոդվածներ [10]:

ե) Հավաքել 1988-1994 թթ. օրաթերթերի ու մյուս պարբերականների հավաքածուները, 1995-2008 (և հետագա) թվականների թերթերից ու այլազան հրատարակություններից հանել խնդրո առարկա նյութերն ու հրապարակումները:

զ) Արցախյան շարժման ու պատերազմի վերաբերյալ թեմատիկ (կամ մասնագիտական) գրադարան ստեղծելու նպատակով հավաքել Արցախում, Հայաստանի Հանրապետությունում, Սփյուռքում տպագրված գրքեր, գրքույկներ, լրագրեր, ժողովածուներ, քարտեզներ, պատկերազարդ ալբոմներ (ինչպես հայ այնպես էլ օտարազգի հեղինակների ՀԱ)[11], պլակատներ, օրացույցներ և այլ տպագիր նյութեր:

է) Ստեղծել լուսանկարների հավաքածուներ (ալբոմներ), հավաքել հերոսների, զոհվածների լուսանկարների, մարտական գործողությունների և բանակային կարևոր միջոցառումների ու առօրյայի առանձին դրվագներ (լուսանկարային), ժապավեններ, նեգատիվներ, սահիկներ և այլն:

ը) Ժամանակի ընթացքում ստեղծել Արցախյան շարժման ու պատերազմի նշանավոր գործիչների, տարեգիրների, զոհված ազատամարտիկների, հերոսների ու աչքի ընկած մյուս պետական, քաղաքական ու ռազմական գործիչների անձնական գործեր, որոնցում հնարավորինս ամփոփված կլինեն նրանց մասին բոլոր տվյալները:

թ) Հավաքել ու համակարգել (հարկ եղած դեպքում՝ վերականգնել կամ բազմացնել) տեսաֆիլմեր, ձայնագրություններ (կասետա, ժապավեն), անհրաժեշտ տեղեկություններ պարունակող մագնիսական սկավառակներ:

ժ) Հավաքված, կենտրոնացված ու համակարգված նյութերի ու ռազմական գործողություններն արտացոլող ռազմական քարտեզների տվյալների համադրմամբ ու փաստերի հիման վրա վերստեղծել մարտական գործողությունների իրական պատկերը և կազմել ճշգրիտ սխեմատիկ քարտեզներ:

ի) Հավաքված նյութի ընձեռած հնարավորությունների սահմաններում գրել ինչպես ՊՖ-ի, այնպես էլ նրա զորամասերի մարտական ուղու[6] ամբողջական ու հավաստի պատմությունը:

լ) Հետագայում ձեռնարկել Արցախյան կոչված, բայց իրականում հայոց հայրենական պատերազմի պատմության գիտական ուսումնասիրության հիման վրա ակադեմիական-գիտական բազմահատորյակի ստեղծումը:

Հարկ ենք համարում նշել, որ 2004թ. մեկ հատորով հրատարակվել է Ղարաբաղյան ազատագրական պատերազմ հանրագիտարանը, որը, առկա որոշ թերություններով հանդերձ, մինչ օրս իր ծավալով ու բովանդակությամբ չգերազանցված աշխատություն է [9]:

խ) Կապեր հաստատել Արցախի, ՀՀ-ի թանգարանների, համապատասխան հասարակական կազմակերպությունների ու հիմնարկների հետ՝ փորձի ու նյութերի կամ տեղեկատվության փոխանակման նպատակով:

ծ) Կահավորել ընթերցասրահ, ուր կարող են հաճախել ու աշխատել բուհերի դասախոսներ, գիտաշխատողներ, գիտական թեզեր, հոդվածներ պատրաստողներ, կուրսային ու դիպլոմային աշխատանքներ գրող ուսանողներ, ռեֆերատներ գրող սպաներ, ՀՊՊ խմբերի ղեկավարներ, մի խոսքով՝ բնագրերում պատմական փաստերով հետաքրքրվողներ:

կ) Գրականության կենտրոնացման նախկին գործուն համակարգի փլուզումից հետո դժվարացել է դրանց հայթայթումը և հաշվառումը, հետևաբար ոչ միայն պետք է հավաքել 1992-[2017 ՀԱ] թվականների ընթացքում տպագրված գրքերը, այլև կազմել մատենագիտական հրատարակություններ՝ խթանելով հետագա ուսումնասիրությունները [7, էջ 5-7]:

Մեր կողմից այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարվել մասնավորապես՝ **ԱՀ ԿԳՄՆ**-ի կողմից տրամադրված ֆինանսական աջակցությամբ իրականացրաց գիտական հետազոտությունների շրջանակներում Արցախում ռազմական շինարարության պատմության վերաբերյալ սկզբնաղբյուրների, գրականության և պարբերական մամուլի հրապարակումների ուսումնասիրման, գիտական մշակման ու համակարգման ընթացքում բազմիցս առնչվել ենք թեմայի ղեկավար **Մ. Հարությունյանի** աշխատություններին և հընթացս գրառել: Մեկ տարում հավաքվել է բավական հարուստ նյութ, ինչը որպես մատենագիտական աշխատանք հրատարակելու գաղափարի հասունացման, ապա և կենսագործման հիմք է հանդիսացել: Այդ գաղափարը կյանքի կոչելու նպատակով զուգահեռաբար ընդհանրացրինք նրա տարբեր տարիների հրապարակումները զանազան պարբերականներում և մատենագիտության ամբողջականությունը պահպանելու համար ընդգրկեցինք նաև թեմային անուղղակիորեն առնչվող (և ոչ միայն) հրապարակումները: Այդուհանդերձ, թեև մեզ չի հաջողվել ընդգրկել բոլոր հրապարակումները, բայց ապագայում այդ բացը լրացնելու մտադրություն ունենք, հաշվի առնելով նաև հնարավոր թերությունները վերացնելու և պատմաբանի աշխատությունների մատենագիտությունը հնարավորինս բարելավելու առաջարկությունները [8]:

Բացի վերոնշյալ աշխատանքներից «Կաճառ» գիտական կենտրոնի կողմից կազմակերպվել են երկու կարևոր միազգային գիտաժողովներ: Հետևյալ խորագրերով՝ «**Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ**»<sup>1</sup>, «**Շուշին՝ հայկական մշակույթի օջախ**» (նվիրված հայկական գրատպության 500-ամյակին)<sup>2</sup> Այդ գիտաժողովներից հետո նոր մտահաղացումներ առաջացան՝ Արցախի պատմության նորագույն շրջանի մի շարք հիմնահարցերի ուսումնասիրման հետ կապված:

Այսպիսով՝ ստեղծված է գործունեության լայն ասպարեզ, որտեղ կարող ենք մեր ներդրումը ունենալ նաև մենք՝ երիտասարդ ուսումնասիրողներս: Միանշանակ նմանատիպ նախագծերը մեկ կամ երկու տարում հնարավոր չէ իրականացնել: Խնդրո առարկա հրապարակումից հստակ երևում է, որ այն երկարաժամկետ է, որի իրականացման ուղղությամբ «Կաճառ» գիտական կենտրոնի կողմից մի շարք աշխատանքներ են կատարվել:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավանետով Հ., Ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցությունը արցախյան ազգային ազատագրական պայքարին, «Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատու գիտական հոդվածների պարբերական ժողովածու», Եր., 2017, էջ 41-49:
2. Ավանետով Հ., Արցախյան ազատամարտի տարեգրության ստեղծման ճանապարհին. «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, 272 էջ, «Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատու գիտական հոդվածների պարբերական ժողովածու», Եր., 2016, էջ 461-464:
3. Ավանետով Հ., Արցախյան ազատամարտի տարեգրության ստեղծման ճանապարհին. «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, 272 էջ, «Մարտիկ» թիվ 27-28 (1201-1202) 1-16 հուլիսի 2016թ.:
4. Ավետիսյան Ա., Հայոց ազգային բանակ-Հայ արիական բռունցք. պատմություն և իրականություն, Արուսյան, 2001, 64 էջ, տես՝ Այվազյան Հ., Հաղթանակած բանակի գեներալը: (Վավերագրական արձակ), Եր., «Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն», 2001, 132 էջ, Բալայան Գ., Աշան գյուղը և աշանցիները: Ակնարկներ, Ստեփ., «Մոնա» 1999,

<sup>1</sup> «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ», 2010թ. Մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ: Խմբ. Մ.Ա. Հարությունյանի «Կաճառ» տարեգիրք, գիրք 4, Շուշի, «Կաճառ» գիտ. կենտրոնի հրատ., 2010, 348 էջ+16 էջ ներդիր:

<sup>2</sup> «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 6, Շուշին՝ հայկական մշակույթի օջախ (Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, 240 էջ: (Պատկերագրող)

- 48 էջ, տես նաև՝ Բաղրյան Վ., Ֆենոմեն, Ստեփ., «Սոնա», 1998, 272 էջ+8 էջ ներդիր, տես նաև նույնի՝ Ավո: Հուշապատում, [հայերեն, ռուսերեն, անգլերեն], Ստեփ., «Դիզակ պյուն» ՄՊԸ, 2009, 160 էջ, Սողոմոնյան Ն., Հիշողության դատ: Մարտակերտ: 1992: Բռնագաղթ, վավերագրական պատումներ, Ստեփ., «Պոլիգրաֆ» ՓԲԸ, 2005, 96 էջ, Մարգարյան Ս., Ոգու լեզենդը, փաստագրություն, Ստեփ., «Դիզակ պյուն» 2012, 216 էջ+10 թերթ ներդիր, Нагорный Карабах: Весна-осень 1990, Документы и материалы, Ер., 1990, 232 с., Арутюнян В. Б., События в Нагорном Карабахе (Хроника, Часть 1, Февраль 1988 г-Январь 1989 г.), Ер., Изд.-АН Армянской ССР, 1990, 168, (Хроника, Часть 2, Январь - Декабрь 1989 г.), Ер., изд. АН Армении, 1993, 400 с., (Хроника, Часть 3, Январь - Декабрь 1990 г.), Ер., изд. АН Армении, 1993, 297 с., (Хроника, Часть 4, Январь 1991 г.- Январь 1993 г.), Ер., изд. "Гитутюн" НАН РА, 1994, 247 с., (Хроника, Часть 5, Январь 1993 г.- Июль 1995 г.), Ер., изд. "Гитутюн" НАН РА, 1997, 511 с., (Хроника, Часть 6, Июль 1995 г.- Май 1997 г.), Ер., изд. "Наири" 1997, 306 с.
5. Հարությունյան Մ., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009թթ.), Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով, մեկնաբանություններով, Ստեփ., «Դիզակ պյուն», 2010, 232 էջ+4 էջ ներդիր:
  6. Հարությունյան Մ., ԼՂՀ Պաշտպանության բանակի մի քանի առանձնա- հատկությունների մասին, Ստեփ., «ԼՂՀ ՊՆ» հրատ., 2010, 48 էջ, տես նաև նույնի՝ Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին 1991-1994, Շուշի «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5 (59-70) 2011, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, 296 էջ +24 ներդիր, տես նաև Հասարակության Մ., Գոյամարտ (ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց), [հայերեն, ռուսերեն] Ստեփ., «ՊՁՀկ», 1998, 32 էջ, տես նաև նույնի՝ Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակ, [հայերեն, անգլերեն, ռուսերեն], Եր., «Տիգրան Մեծ» 2013, 324 էջ, նույնի՝ Հաղթող բանակի գորահանդեսը, [հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն], Եր., «Տիգրան Մեծ» 2013, 176 էջ, նույնի՝ Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակ, [հայերեն, անգլերեն, ռուսերեն], Եր., «Տիգրան Մեծ» 2017, 324 էջ:
  7. Հարությունյան Մ., «Կաճառ» գիտական կենտրոն» հասարակական կազմակերպության 2009 թվականի գործունեության մասին, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, (35-46) 2009, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, էջ 3-15:
  8. Հարությունյան Մ. Ա. Մատենագիտություն (1990-2015 թթ.), կազմ.՝ Հ. Ղուլյանը և Հ. Ավանեսովը; Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Մ. Ավանեսյան, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոն, 2015. - 160 էջ:
  9. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան 1 հատորով (Հայկ. հանրագիտարանի հրատ. գիտախմբագր. հանձնաժողով՝ Հ. Մ. Այվազյան (գլխ. խմբագիր-տնօրեն), Զ. Հ. Բալայան (նախագահ), Հ. Մ. Խաչատրյան (գլխ. խմբագրի և նախագահի տեղակալ, հատորի պատասխ.)... Մ. Ա. Հարությունյան և ուրիշներ), Եր., «Հայկական հանրագիտարանի» հրատ., 2004, 864 էջ:
  10. Մինասյան Մ., Ակնակներ հանուն Արցախի նահատակված չափարցիների մասին, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, (35-46) 2009, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, էջ 16-36, Նարինյան Գ., Օրագրություններ, հուշեր, վկայություններ, [հրապարակման պատրաստեց՝ Մ. Հարությունյանը], «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, (35-46) 2009, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, էջ 74-119, Ղարաբաղյան Գ., Իմ անցած մարտական ուղին, [հրապարակման պատրաստեց՝ Մ. Հարությունյանը], «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, (35-46) 2009, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, էջ 120-134, Բաղալյան Գ., Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղի ինքնապաշտպանական ջոկատը, [հրապարակման պատրաստեց՝ Մ. Հարությունյանը], «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, (35-46) 2009, Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2014, էջ 135-142:
  11. Torossian S., Le Haut-Karabakh Arménien: Un Etat Virtuel ?, Paris, 2005, 333 p., Derebian C., Artzaj (Karapagh): La compleja Trama Caucásica, imprenta Profika Ciudad de Buenos Aires, 2001, Aliprandi E., Le ragioni del Karabakh, Garavaggio ed. & Mybook, 2010, 135 p, Chorbajian L, Donabedian P., Mutafian C., THE Caucasian Knot. The history and Geopolitics of Nagorno-Karabagh, London, Zed Books Ltd. ed.,

1994, 192 p., Барсегов Ю. Г., Нагорный Карабах в международном праве и мировой политике (Том 1) , М. 2008 Том 1, 944 с., Том 2, М. 2009 480 с., Лисицын С., Армяне Нагорного Карабаха, Ер., АН изд., 1992 , 239 с., Мелик-Шахназаров А., Нагорный Карабах. Хроники ненависти, Минск, Изд. \"Современная школа\", 2011 ,528 с., Мелик-Шахназарян Л., Агрессия Азербайджанской республики очертила границы республики Арцах, Ер., 2014, 64 с., Минасян С., Нагорный Карабах после двух десятилетий конфликта: неизбежная пролонгация статус-кво? , Институт Кавказа , Ер., 2010, 80 с.

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀ-Արցախի Հանրապետություն  
ԼՂԻՄ-Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ  
ԼՂՀ-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն  
ՀԿ-Հասարակական կազմակերպություն  
ՀՀ-Հայաստանի Հանրապետություն  
ՀՊՊ- Հասարակական պետական պատրաստություն  
ԿԳԿ-«Կաճառ» գիտական կենտրոն  
ԿԳՄ-Կրթության, գիտության և սպորտի նախարարություն  
ՄՀՆՁ-Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ (ՕՄՈՆ)  
ՊԲ-Պաշտպանության բանակ  
ՊԶՀԿ-Պոլիգրաֆ ձեռնարկության հրատարակչական կենտրոն  
ՊՆ-Պաշտպանության նախարարություն  
ՊՈԱԿ- Պետական ոչ առևտրային կազմակերպություն  
ՄՊԸ-Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
ՓԲԸ-Փակ բաժնետիրական ընկերություն  
АН- Академия наук  
НАН- Национальная академия наук  
РА- Республика Армения  
ССР- Советская Социалистическая Республика

## РЕЗЮМЕ

**Научный центр “Качар” и летопись арцахской национальной освободительной борьбы  
Овик Аванесов**

**Ключевые слова:** Арцахская освободительная война, военная агрессия Азербайджана, эпохальное событие, новейшая история Армении, научный центр «Качар», хроника, вклад, национальная борьба, военное вторжение.

Арцахская национально-освободительная борьба является одной из славных страниц новейшей истории армянского народа. Благодаря этой национальной борьбе армянская государственность была восстановлена на одной части исторической родины. В создание летописи этого эпохального события свой вклад внес и научный центр «Качар», чьи ежегодники, богатый библиотечный фонд и ценные архивные материалы имеют важное источниковедческое значение для всестороннего изучения темы.

## SUMMARY

**"Katchar" Scientific Centre and the Chronicle of the Artsakh National Liberation Struggle  
Hovik Avanesov**

**Key words:** The Artsakh Liberation War, the military aggression of Azerbaijan, epochal event, the modern history of Armenia, Scientific center “Kachar”, chronicle, contribution, national struggle, military invasion.

The Artsakh National-Liberation Struggle is one of the glorious pages of the modern history of the Armenian people. Thanks to this national struggle, the Armenian statehood was restored in a part of the historical homeland. The scientific center ‘Kachar’, the yearbooks, rich library fund, and valuable archival materials of which have a source-study significance for the comprehensive study of the issue, also made its contribution to the creation of the chronicle of this epochal event.